Սույն համարից սկսած «Գրականագիտական հանդեսը» անցկացնում է հարցում՝ գրականության և գրականագիտության առնչության հարցի շուրջ: Մեր հարցաթերթիկին պատասխանել են թե՛ գրողներ, թե՛ գրականագետներ: Ընթերցողներին ենք ներկայացնում նրանց տեսակետները:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

1. Արդի քննադատություն. ուղիներ, փակուղիներ:
2. Քննադատությունը գրական պրոցեսում. հավելվա՞ծ, դատավո՞ր, լիիրավ մասնակի՞ց, թե՞....

ՎԱՉԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

1. Փակուղին ճանապարհ է, որ ելք չունի. հասնում ես վերջին, և պարզվում է, որ դիմացը կա՛մ պատ է, կա՛մ ծոր: Գրական քննադատության ընթացքի (անգամ ոչ զարգացման) ճանապարհին փակուղի կամ փակուղիներ չկան: Սա սովորական ընթացք է, սովորական ճանապարհ է, որով քայլողները (քննադատները), ցավոք, գրեթե նկատելի չեն: Սա ճանապարհ է պատմության խորքերից եկող (մեր քննադատությունը սկիզբ է առնում ոսկեդարից), որը մերթընդմերթ աչքի է ընկել բազմամարդությամբ ու երևելի անհատականություններով՝ պայմանավորված և՛ պատմական որոշակի ժամանակահատվածի սոցիալ-քաղաքական իրադարձություններով, և՛ գրականության ընդհանուր աշխուժացմամբ ու զարթոնքով, և՛, անշուշտ, տաղանդավոր անհատականությունների գոյությամբ: Ճշմարիտ քննադատը նույնպես ստեղծագործող է, ինչպես գրողը, և եթե ներքին մղումներ ունի գրելու, չի կարող չգրել, ինչպես ճշմարիտ գրողը:

Այսօր գրաքննադատության ասպարեզում սակավամարդությունը և գրականության նկատմամբ բուռն վերաբերմունքի պակասը (չասենք բացակայությունը, որովհետև կան ոչ մեծ թվով, բայց լուրջ քննադատներ, լույս են տեսնում հետաքրքիր գրախոսություններ, տեսական հոդվածներ) պայմանավորված է պահանջարկի պակասով, նյութական ու հոգեկան-հոգեբանական իրավիճակով: Նախ՝ գրողները (քիչ բացառությամբ) քննադատից ակնկալում են գովեստի խոսքեր և նեղանում են դիտողությունների համար (պատկերացրեք՝ ինչ կլինի, եթե քննադատը նրանց գործը որակի որպես խոտան): Ուրեմն խաթարվում են մարդկային հարաբերությունները, մանավանդ մեր փոքրիկ քաղաքում, ուր բոլորը իրար ճանաչում են: Քննադատը, հասկանալի է, պետք է շատ կարդա, շատերին կարդա, ընթացիկ գրականությանը հետևի, իսկ դրա համար այսօր նա ժամանակ չունի (մտահոգված է ապրելու խնդիրներով): Եվ, այնուամենայնիվ, եթե նա գտնում է այդ ժամանակը, իր հանգսի, քնի ժամերի հաշվին, նրա աշխատանքը նյութական առումով չի խրախուսվում. մամուլը նրան չի վարձատրում, եթե անգամ վարձատրում է, ապա այնքան չնչին, որ թղթի, մեքենագրելու (կոմպյուտերային տպագրության) գինն էլ չէ: Ուրեմն՝ ինչո՞ւ և ո՞ւմ համար գրել: Մնում է քննադատի ներքին մղումը, կոչված լինելը: Իսկ այդպիսիք քիչ են լինում բնականորեն: Եվ ճշմարիտ քննադատական հրապարակումները նույնպես: (Բարեկամական, ընկերական, շահադիտական կենաց-գրախոսությունները քննադատության հետ կապ չունեն):

Ե՞լքը: Փակուղի չկա, որ ելք փնտրենք: Քննադատությանը աշխուժացում, ծավալում, լրջություն հաղորդելու համար բարոյական մթնոլորտ, սոցիալական-նյութական բազա է հարկավոր (ավելին, քան գրականության համար), որ լսեն ու հանդուրժեն քննադատին և ըստ արժանվույն գնահատեն նրա աշխատանքը:

2. Քննադատության տե՞ղը գրական գործընթացում: Գրականությունը և քննադատությունը համաժամանակյա, միմյանցով պայմանավորված արտահայտիչներն են գրական-գեղարվեստական գործընթացի: Բնականաբար, գրականությունը առջևից է ընթանում, բայց լինում են պահեր, որ քննադատությունը կարող է ա-

ռաջ ընկնել գրականության զարգացման ուղիները մատնացույց անելով գրողներին, ինչ-ինչ պահերի ուղղորդել նրանց ճանապարհի ընտրության հարցում: Քննադատությունը հավելվա՞ծ: Հաստատապես՝ ոչ: Նրանք ամբողջի՝ գրական գործընթացի, իրար հետ, միասնաբար հանդես եկող մասերն են: Ճշմարիտ գրողները նաև քննադատներ են, նախ՝ իրենց քննադատը, ապա՝ գրական ողջ ընթացքի: Նայենք մեր քննադատական մտքի պատմությանը և կտեսնենք, թե որքան մեծ է այդ պատմության մեջ (և իրենց ժամանակի) մեր գրողների դերը: Խոսքը ոչ միայն գրողների տեսական-քննադատական հոդվածների մասին է, այլև գեղագիտական հայացքների, որ դրսևորվել են ոչ միայն հոդվածներում, այլև գեղարվեստական ստեղծագործության մեջ (հիշենք Աբովյանի «Վերք Հայաստանին», Չարենցի «Էպիկական լուսաբացը», Բակունցի «Ալպիական մանուշակը», Սևակի «Մարդը ափի մեջ» և շատ ուրիշների ուրիշ շատ ստեղծագործություններ):

Քննադատությունը դատավո՞ր: Ինչո՞ւ: Դատավորը որոշում է մեղավորության չափը և վճիռ է կայացնում: Քննադատը վերլուծում, արժեքավորում, գնահատում է գրական երկը: Դատավորի վճիռը վերջնական է, որոշ դեպքերում՝ նույնիսկ «բեկման ենթակա չէ»: Քննադատի խոսքը վճիռ չէ, կարծիք է, չպարտադրող, որը գրողը կարող է ընդունել կամ չընդունել: Քննադատելը, անգամ եթե միայն դիտողություններ է, դատել չէ: Դատելը այստեղ մտածելն է, խորհելը, դատողություններ անելը նաև (և հատկապես) երկի դրական, արժեքավոր կողմերի, գեղարվեստական արժանիքների, գրողի ինքնատիպության դրսևորումների՝ ասելիքի ու խոսքի արտահայտչաձևերի մասին: Իմ կարծիքով քննադատի գործը առաջին հերթին հենց սա պետք է լինի: Քննադատը առաջին հերթին երևի թե գրողի (երկի) դատապաշտպանն է, մեկնաբանը:

Այո՛, քննադատությունը գրականության գործընթացի, գրական մթնոլորտի լիիրավ մասնակիցը պիտի լինի: Գրողները դժգոհում են, թե քննադատությունը հետ է մնում գրականությունից, ընդհանրացումներ չի անում, չի առանձնացնում ճշմարիտ, տաղանդավոր գրողներին թույլերից ու ապաշնորհներից, բայց դժգոհում են նաև այդ բնույթի հոդվածներից, եթե նրանց մեջ հանկարծ չեն գտնում իրենց անունները՝ մոռանալով, որ քննադատն էլ կարող է ունենալ ի՛ր չափանիշները, ի՛ր գեղագիտությունը, ինչպես գրողը: Քննադատը կոչված է, ըստ իր գիտելիքների, իմացության, ճաշակի ու գեղագիտության, քննել, արժեքավորել գրական երկը, բացահայտել նաև, իր կարծիքով, գրողի ասելիքի, երկի գեղարվեստական կառույցի պակասությունները, իսկ գրողը պետք է կարողանա լսել քննադատին, հավատալ նրա անկեղծությանը, և հանգիստ խորհել, թե ինչու է ընթերցող-քննադատը իր երկից ստացել այդպիսի տպավորություններ (դրական թե բացասական), փորձի ինքնադատորեն նորից մտածել իր գործի մասին: Բնավ էլ պարտադիր չէ, որ քննադատը անսխալ լինի. թէ որ նա էլ է ընթերցող, թեկուզ մի քիչ տարբեր սովորական ընթերցողից՝ իր մասնագիտական գիտելիքներով: Եվ միայն այն ժամանակ, երբ գրողն ու քննադատը կարողանան իրար հավատալ ու հարգել, իրար լսել ու խորհել գրականության մասին՝ վեր կանգնելով իրենց եսից, մենք կունենանք գրական գործընթացի իսկապես լիիրավ մասնակից ճշմարիտ գրաքննադատություն (ապաշնորհներն ու «յոլա տանողները», գրող թե քննադատ, որ առավել ագրեսիվ են ու պահանջկոտ, անխուսափելի են բոլոր ժամանակներում):

Բ 2004

ՊԵՐՃ ՋԵՅԹՈՒՆՑՅԱՆ

Եթե ծանոթ ես Բախտինի, Շկլովսկու, Լոտմանի, Պալիևսկու, Ավերինցևի գործերին, եթե ժամանակին գոնե երբեմն կարդացել ես "Вопросы литературы" ամսագիրը, ինչպես կարող ես ասել, որ քննադատությունը հավելված է կամ դատավոր, պարզ չէ՞, որ այն գրական պրոցեսի լիիրավ մասնակիցն է, դեռ ավելին՝ գրական ինքնավար ժանր է, երբեմն նույնքան հետաքրքիր ու խորը, որքան գեղարվեստական ուշագրավ ստեղծագործությունը: Բայց եթե կարդացել ես վերջին երեսուն-քառասուն տարվա հայ քննադատներին, ինչպես կարող ես չասել, որ այն լավագույն դեպքում դատավոր է, ես կասեի նույնիսկ՝ ոչ թե դատավոր, այլ սովետական շրջանից հայտնի ՕՏԿ-ն: Բացառություններ եղել են, անշուշտ, և չեն կարող չլինել: Խոսքը ընդհանուր պատկերի մասին է:

(Ես հասկանում եմ, անշուշտ, որ գրականագիտությունը և քննադատությունը տարբեր բաներ են, բայց հասկանում եմ նաև, որ նրանց առնչությունները ևս քիչ չեն):

Քննադատությունը պետք է ժամանակին կռահեր, թե ինչպիսին կլինի վաղվա գրականությունը, գրական զարգացման որ ուղիներն են կենսական, եթե նրանք պետք է գուշակած լինեին այսօրվա գրական միտումները: Եղե՞լ է նման բան:

Գրողը հիմնականում գրում է բնազդով, «գլխով» գրելը գրեթե անհնար է: Բայց այն, ինչին գրողը հասել է բնազդով, քննադատը պարտավոր է գիտակցական մակարդակի վրա բարձրացնել, նույնիսկ «բացատրել» գրողին, թե ինչ է արել նա: Դրա համար էլ գրողի համար երբեմն անչափ հետաքրքիր է կարդալ քննադատի հոդվածը իր ստեղծագործության մասին և «հասկանալ» ինքն իրեն:

Լուրջ գրողը լուրջ քննադատից չի կարող նեղանալ կամ վիրավորվել, կենցաղային հողին հաճախ իջնում ենք կողմերից մեկի կամ երկուսի ոչ քաղաքակիրթ մակարդակի հետևանքով:

ՄԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Պատասխանն սկսեմ երկրորդ հարցից: Քննադատությունը գրական պրոցեսի ոչ հավելվածն է, ոչ էլ դատավորը, «լիիրավ մասնակից» բնորոշումն էլ ճշգրիտ չի. քննադատությունը գրական պրոցեսի պարտադիր ու առանցքային բաղադրիչն է, այն բաղադրիչը, առանց որի գրական պրոցեսը կաթվածահարվում է: Ոնց որ հիմա Հայաստանում: Ում հարցնես՝ կասի մենք էսօր գրականություն չունենք: Ու ինքը բացարձակ սխալ լինելով՝ փաստորեն ճիշտ է դուրս գալիս: Բացարձակ սխալ լինելով՝ որովհետև միայն վերջին մեկ տասնամյակում Հայաստանում այնքան լավ ու այնքան բազմազան գրականություն է ստեղծվել, որ ուրիշ ժամանակ մեկ ամբողջ հարյուրամյակում կարող էր չստեղծվել: Բայց ընթերցողը ճիշտ է, որ ասում է գրականություն չկա, որովհետև եթե եղածը իրեն չի հասնում, ուրեմն իր համար փաստորեն չկա: Իսկ եղածը իրեն ինչպե՞ս հասնի, եթե հաղորդակցման համակարգը չի գործում, խափանված է: Հայաստա-

նում այսօր ստեղծվող գրականությունը նոր գրականություն է ընթերցողն այդ նորի պահանջն ունի, բայց նորն ընկալելու վարժություն չունի, կարդում, շվարում է: Նրան շվարումից հանողը քննադատն էր լինելու, բայց ո՞նց հանի, երբ որ ինքն առավել է շվարած: Ողբերգազավեշտական վիճակ է:

Ես այս ամեն ինչը ինձ համար վաղուց եմ պարզել: Ու հասկացել եմ, որ ելքը մեկն է. եթե հայ քննադատը մի կողմ է քաշվել, հայ գրողն ինքը պետք է նրա գործն իր վրա վերցնի, նաև քննադատությամբ զբաղվի: Մի ուրիշ բան էլ եմ հասկացել. իր դերը լիարժեք կատարելու համար քննադատությունն այսօր պետք է դուրս գա զուտ գրական շրջանակներից ու կապվի հասարակական խնդիրների հետ: Որովհետև, իմ համոզմամբ, հայ հասարակության ճգնաժամն ու հայ քննադատության ճգնաժամը նույն ցամաք ակունքից են սնվում. հին միտքը Հայաստանում սպառվել է, նորն ուշանում է:

ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

1. Իրողությունն այն է, որ արդի քննադատությունը ամբողջովին չի ընդգրկում գրականության ընթացքը, հաճախ մակերեսային է ու պարզունակ, ընդհանրապես՝ հաճոյախոս: Մենք բոլորս շատ, թե քիչ պատրաստ ենք լավ գործի մասին լավ խոսք ասելու, բայց բավարար համարձակություն չունենք խոտանի դեմ կռիվ մղելու: Այսօր պակասում է կռիվը հանուն բարձր չափանիշների նաև այն պատճառով, որ չափազանց անկայուն ու տարբեր են հենց չափանիշների ըմբռնումները: Անշուշտ, ամեն մի օրինաչափություն իր բացառություններն ունի, և կարելի է հանուն արդարության մի քանի անխոնջ քննադատների անուն հիշատակել, բայց դա չի փոխի իրերի ներկա դրությունը: Քննադատության տեղատվության մասին խոսում նաև երիտասարդ կադրերի, եթե չասենք բացակայությունը, ապա շատ սակավ ներկայությունը: Ի տարբերություն գրականության, քննադատության մեջ սերնդափոխությունը հապաղում է: Սա, իհարկե, դեռևս փակուղի չէ, բայց այս վիճակը տագնապ է հարուցում:

Այսուհանդերձ, կարծում եմ, որ նման երևույթների պատճառները (որոնց գիտակցման դեպքում կարող ենք դուրս գալ այս վիճակից) ոչ միայն քննադատների մեջ են, այլև նրանցից դուրս: Քննադատությունը մեր ապրած հասարակական, մշակութային, կրթական կյանքի արդյունքն է, հետևանքը, ոչ պատճառը: Պետք է սկսել նրանից, թե որտեղ, ինչ հասարակական ու բարոյահոգեբանական մթնոլորտում է ձևավորվում այսօրվա (կամ վաղվա) քննադատը: Այսօր քանի՞ մեղալակիր է ընդունվում բանասիրական ֆակուլտետ, հանրակրթական դպրոցի շրջանավարտը քանի՞ գիրք է կարդում, ազդեցության ի՞նչ լսարան ունի ժամանակակից գրողը և, վերջապես, ո՞րն է հասարակական պահանջարկը, ի՞նչ է ուզում հասարակությունը գրականությունից, գրողն ու հասարակությունը՝ քննադատությունից: Այս հարցերին պատասխանելու համար հարկավոր են լուրջ հետազոտություններ, որոնք կօգնեն քննադատին, թեև քննադատն ինքն էլ կարող է նման վերլուծությու-

ներ անել: Որքան էլ ստեղծագործական լինի քննադատի մղումը (իսկ դա, իրոք, այդպես է, և քննադատը գրում է իր գեղագիտական իդեալի թելադրանքով), այնուամենայնիվ, անկախ իր նախասիրություններից, նա պետք է զգա իր պատասխանատվությունը թե՛ հասարակության, թե՛ գրականության առաջ:

Հազիվ թե կարելի է հուսալ քննադատության պայծառ ապագայի մասին այն պայմաններում, երբ պետական այրերի շուրթերից բազմիցս հայտարարվում է, թե հայագիտությունը մեզ համար առաջնահերթ ոլորտ է, բայց զուգահեռաբար կրճատվում են գրականության քննությունները դպրոցներում և բուհերի հումանիտար ֆակուլտետներում, երբ նվազագույնի է հասցվում գրականության ուսուցումը նշված տեղերում: Ո՞ւմ համար գրի քննադատը, երբ գրականությունը վտարվում է մեր կյանքի բոլոր բնագավառներից և դառնում, լավագույն դեպքում, համատարած շոուի բաղադրիչ մաս:

Այսուհանդերձ, կա ելքը: Դա առաջին հերթին պայքարն է գրականության դերի բարձրացման համար և ապա՝ ամենակարևորը, քննադատի մասնագիտական ունակությունների կատարելագործումը: Քննադատը պետք է փաստարկի իր խոսքը, նա պետք է ապացուցի առանց բանածնի: Այս դեպքում միայն նրա խոսքը կունենա կշիռ և հասարակական լսարան:

2. Քննադատությունը գրական ընթացքի անբաժանելի մասն է, և հավելվածի կամ ավելորդության մասին չի կարող խոսք լինել: Քննադատությունը հայելի է, որի մեջ գրականությունը տեսնում է ինքն իրեն: Ծուռ, կոտրված, թե մասամբ ներկաթափ, այնուամենայնիվ, քաղաքակիրթ մարդու համար հայելին անհրաժեշտություն է թեկուզ մոտավոր ինքնաճանաչման համար: Վ. Բելինսկին ասում էր, թե քննադատությունը գրականության ինքնագիտակցությունն է: Ահա այդ հայելի-քննադատության մեջ է գրականությունը տեսնում իրեն, գիտակցում իր վիճակը:

Քննադատի դատավոր լինելու հարցը միշտ էլ ունեցել է հիվանդագին անդրադարձներ, ում հետ ասես չեն համեմատել քննադատին՝ դատավորի, մարգիչի, դայակի, ընկերոջ, խորհրդատուի, թշնամու, անհաջողակի... Իրականում քննադատի խնդիրը գրողին դատելը չէ, նրա խնդիրը գրականության շահն է, որի տեսանկյունից էլ նա գրական երկում տեսնում է նվաճումներ, ձեռքբերումներ, վարպետություն, ինչպես նաև՝ թերություններ, սխալներ, վարպետության պակաս և այլն, և այլն: Քննադատությունը մասնագիտություն է, որ իրականացվում է գրական նյութի տարրալուծման և համադրման ճանապարհով, դա դատ չէ, այլ մասնագիտական աշխատանք: Միայն թերություններ բացահայտելը և գրողին մեղադրելը դեռևս քննադատություն չէ, դեռևս Ստ. Նազարյանն էր հիշեցնում, որ այն աչքը, որ միայն թերություններ է տեսնում և ոչ մի արժանիք, այդ աչքը «թքանելի» աչք է և պետք է տեղից հանել: Իսկ Մ. Նալբանդյանը ավելի էր շեշտում քննադատի դրական դերը՝ ասելով, թե քննադատը բարոյապես սրբում է գրողի ճակատի քրտինքը: Ուրեմն՝ «դատավոր» հասկացությունը չպետք է ըմբռնել շատ ուղղագիծ, քննադատի գործն ավելի ճկուն է և, <u>ըստ գրողի ընձեռած հնարավորության</u>, քննադատը կարող է լինել և՛ մեղադրող, և՛ դատավոր, և՛ դատապաշտպան, բայց ամեն դեպքում՝ գրականության բարեկամ: